իրանց ոսկի եւ արծաթի զարդերից. նրանք իրանց մատանիները, քամարները, գլխի պաճուճանքը եւ պարանոցի մանեակները թափում էին վանահօր մօտ, որպէսզի հայոց առաքեալի սուրբ աջը՝ «իրանց երկրի պաշտպանը», գերի չմնայ «անօրէնների եւ անհաւատների» ձեռքում:

Ես մինչեւ այսօր յիշում եմ նոյն սուրբ աջը, նա մի հսկայական բազուկի մեծութիւն ունէր. տասն անգամ նրա ծանրութեամբ ոսկին՝ այդ սարսափելի քանակութիւն էր աղքատ ժողովրդի համար: Բայց նա զոհեց բոլորը, միայն թէ իր սրբութիւնից չզրկուէր, որովհետեւ նրանից կախուած էր իր ներկայ եւ հանդերձեալ կեանքի բախտաւորութիւնը, — իր հոգու եւ մարմնի փրկութիւնը....

Ես դեռ չեմ մոռացել, երբ երաժշտութիւն էր լինում կամ մարախ էր գալիս, ժողովուրդը դիմում էր վանահօրը, որ «անդաստան» անէ: Վանահայրն առնում էր սուրբ աջը, եւ խաչերով, խաչվառներով, բոլոր եկեղեցական սպասով դիմում էին դէպի դաշտերը եւ սուրբ թափօրը, ժողովրդի անհուն բազմութեան հետ, հանդարտ եւ դանդաղ ընթացքով շրջում էին մշակութեան դաշտերում, եւ իրանց արտասուքով, խնկարկութեամբ, ողբալի շարականներում աղերսում էին երկնքի հաշտութիւնը, միջնորդ ունենալով սուրբ աջը, որ ամբոխը տանում էր իր առջեւից, որպէս Իսրայէլը «տապանակ ուխտին»:

Եւ այսպէս, վանքերի եւ եկեղեցիների ամէն մի սրբութիւնը ունէր իր հրաշագործ յատկութիւնները: Մէկը նշանաւոր էր որպէս դիւահարներին ազատող, միւսը հռչակուած էր որպէս անդամալոյծները բժշկող, երրորդը՝ որպէս ջերմախտի փրկարար եւ այլն: Եւ ժողովուրդն ամենայն ջերմեռանդութեամբ դիմում էր դէպի սրբութիւնները իր հիւանդութիւններից բժշկութիւն գտնելու համար: Հրաշագործ էին եւ զանազան աւետարաններ, նարեկներ, որոնք գրուած էին սուրբ մարգերի գրիչով: Այս մագաղաթեայ գրքերը, ոսկենկար պատկերներով, զարդարած թանկագին կազմով, պահւում էին փաթաթած մետաքսեայ եւ զառ թաշկինակների մէջ, եւ բոլորովին անմերձենալի էին ժողովրդին: Նրանց բաց էր անում միայն շատ անհրաժեշտ դէպքերում վանահայրը, երբ հարկաւոր էր նոյն գրքերով մի գլուխ աւետարան կարդալ որեւիցէ հիւանդի վրայ:

Ես բոլորովին անօրէն եւ անհաւատ էի համարում Կարոյին, երբ նա ասում էր ինձ, թէ «վանքերի սրբութիւնները մեր ազգի տունը քանդեցին, թէ նրանք մի պատրաստի առարկայ էին դարձել մեր թշնամիների եւ նոյնիսկ մեր վարդապետների շահասիրութեանը: Նա ասում էր, եթէ հնար լինէր, ին-